ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն գիտական, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժ Վլադիմիր Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան փողոց հ. 5ա հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վլադիմիր Կարապետի Հայրապետյանը ծնվել է 1927 թվականի սեպտեմբերի 27-ին Նախիջևանի ԻԽՍՀ Ջուլֆա քաղաքում, 1930 թվականից բնակվել է Երևանում:

1950 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

1955 թվականին ավարտել է ԽՍՀՄ ԳԱ էկոնոմիկայի ինստիտուտը (ք. Մոսկվա):

1955 թվականից Վ. Հայրապետյանը աշխատել է Վ. Բրյուսովի անվան ինստիտուտում, 1971-1997թթ.՝ որպես քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, 1974-1978թթ. և 1982-1984 թթ.՝ ուսումնական գծով պրոռեկտոր:

Վաստակաշատ գիտնական Վլադիմիր Հայրապետյանին 1983 թվականին շնորհվել են տնտեսագիտական գիտությունների դոկտորի, 1985թ.՝ ՀԽՍՀ Բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի, իսկ 1986 թ.՝ պրոֆեսորի կոչումներ:

Վ.Հայրապետյանը մի շարք գիտական աշխատությունների և հրապարակախոսական հոդվածների հեղինակ է, որոնցում նա առաջ է քաշել արդյունաբերության տեղաբաշխման, արդյունաբերական արտադրության ճյուղային կառուցվածքի և այլ խնդիրների վերաբերյալ գործնական դրույթներ:

Գիտնական, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժ Վլադիմիր Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան փողոց հ.5ա հասցեում փակցնելու համար միջնորդություններ են ներկայացրել Վ. Հայրապետյանի հարազատները և Բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ի. Առաքելյանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վլադիմիր Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վլադիմիր Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ